22783
C 1926-16328
15 JAN 2010
05 FEB 2008

# Հավաքական պայմանագիր

331.1
Ա-89

Կնքված Ադրբ. Նավթային Վարչության «Ազնավթ»-ի և համամիութ. հանքագ. միու-
թյուն Ադրբեջ. բաժ. միջև։
I|VII 24-ից մինչև 30|IX 24 թ,

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИ
Академии Н
СССР

331.1
Ա-89

ԲԱՔՈՒ
1924

Азл. 2016 2-ая Гостип. Аз

Ա
2063

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

# ՀԱՎԱՔԱԿԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

## Բաժ. I.

### Ընդհանուր դրություն

§ 1. Սույն հավաքական պայմանագիրը կն- ում է հանքագործների համամիակ. միու- ան Ադրբեջան բաժնի մի կողմից և Ադրբե- նի Նավթային վարչության և Նավթսինդիկա- ի վարչության ներկայացուցչի մյուս կողմից։

**Ծանոթ.** *Ապագայում կրճատման նպատակով առա- ջինը անվանվում է «միություն» իսկ յերկրորդը «Ազնավթ»*

§ 2. Ներկա պայմանագիրը տարածվում է ըոր, վարձատրություն ստացող բանվորների ծառայողների վրա, թե ներկայումս ծառայող թե ապագայում ծառայության մտնող Ադրբե- նի սահմաններում գտնվող թե ներկայումս յություն ունեցող և թե ապագայում այս այմանագրի ժամանակամիջոցին բացվող Ազ- ավթի բոլոր. հի. ձեռնարկությունններում ու պար- ագիր է վորպես աշխատողների, նույնպես և զնավթի համար։

**Ծանոթ.** *1) Այն հիմնարկությունների ծառայողների վրա, վորոնք չեն պատկանում հանքագործների միության, նույն պայմանագիրը տարածվում է այն դեպքում, յեթե միայն համապատասխան միությունը չի կնքել Ազնավթի*

25 FEB 2013



22783

հետ առանձին պայմանագիր կամ համաձայնություն։

**Ծանոթ.** 2) «Վարձատրություն ստացող» ների մեջ չեն մտնում կապալառուները, ապրանք փոխադրողները, սեփական ինվենտարով աշխատողները (Սայլ, ձի և այլ)։

**Ծանոթ.** 3) Սույն պայմանագիրը չի տարածվում այն անձանց վրա վորոնք վարձելու և արձակելու իրավունքով յեն օգտվում, (թվով 28 մարդի) վորոնց ցուցակը կցված է սույն պայմանագրին։ (հավելված № 1)։

§ 3. Սույն պայմանագիրը կյանքի անց կացնելու և ապագայում պատահած վեճերը և կոնֆլիկտները լուծելու համար կազմվում է Ագնավլթի հիմնարկություններում կոնֆլիկտա-գնահատական կոմիսիա։ (կոնֆլիկտնո- րասցենողնայա կամիսսիա) կենտրոնական (Կ.Կ.Գ.Կ.) և տեղական (ՏԿԳԿ) վորը պետքե ղեկավարվի, համաձայն «վորոշումներ ԿԳԿ-ի մասին» հրահանգով։ (հավելված № 2)։

§ 4. Սույն պայմանագիրը կնքվում է յերեք ամսով այն է, 1924 թ. հուլիսի 1-ից մինչև 1924 թ. հոկտեմբերի 1-ը.

§ 5. Այս պայմանագրի գոյության ընթացքում, վոչ մի անհատական պայմանագիր կամ համաձայնություն աշխատավորներների հետ վորոնց վրա տարածվում է սույն պայմանագիրը, չի կարող կնքվել: Բացառություն յեն կազմում վարչական-տեխնիկական և բարձր վորակյալ գրասենյակային պաշտոնյաները, վորոնց հետ կարող յեն կնքվել անհատական պայմանագրեր և համաձայնություններ, միության գիտությամբ։

ՏԵՍԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀԱՍՌ-Ի ԱՀ ԱԳ ԻԵՍ
56669.66



§ 6. Սույն պայմանագրի առանձին կետերը փոխադրաց համաձայնությամբ կարող յեն փոխվել։ Փոփոխություն առաջարկող կողմը պարտավոր է հայտնել միուսին ու գրավոր կերպով հայտարարել փոփոխության բովանդակությունը, յերկու շաբաթ առաջ նախ քան նրա ի կատար ածելը և սույն պայմանագրի ժամանակամիջոցը լռանալուց վոչ ուշ քան մի ամիս մնացած։ Փոփոխությունը կարելի է ի կատար ածել միայն փոխադրաց համաձայնությունից հետո։ Յեթե մի կողմի առաջարկությանը, հակառակ կողմը 5 որվա ընթացքում (հաշվելով փոփոխության բովանդակությունը հանձնելու որից) պատասխան չի տալիս, ապա փոփոխությունը համարվումե ընդունված նույն որից յեթե միայն չի նշանակված մի ուրիշ ժամանակամիջոց։

§ 7. Յեթե մինչ սույն պայմանագրի վերջանալը, վոչ մի կողմ միուսին գրավոր դիմում չի անել, ցանկանալով փոխել ամբողջապես պայմանագիրը կամ փոփոխել նրա վորոշ կետերը, ապա պայմանագրի ժամանակը հաշվվում է ավելացած դարձյալ մեկ ամսով. Պայմանագիրը վերանորոգել ցանկացող կողմը, պետքե գրավորառաջարկություն անել իր դիմացի կողմին և այն ել վոչ ուշ քան սույն պայմագրի ժամանակը լրանալուց մեկ ամիս

մնացած։ Իսկ յեթե առաջարկությունը արվել է ավելի ուշ, այդ դեպքում պայմանագիրը պահպանում է իր ույժը դարձյալ մեկ ամիս, հաշվելով առաջարկություն ստացած օրվանից։

§ 8. Աշխատավարձի վնասները, վորոնք կկրի բանվորը այն կոնֆլիկտներից, վորի պատճառը Ազնավթն է կամ նրա հիմնարկությունները, վճարում է Ազնավթը, վերջնական վորոշումից հետո և սդկ-ի վճռված չափով։

§ 9. Այս պայմանագրի խախտողը կամ չկատարող բանվորներն ու ծառայողները պատասխանատվության յեն ենթարկվում և նրանց վերաբերմամբ գործադրվում է սույն պայմանագրի § 16-ի կետը, իսկ այս պայմանագիրը վարչական խաղտող անձինք յենթարկվում յեն քրեական պատասխանատվության և դատվում են ըստ քրեական որենսդրության § 130-ի։

## Բաժ. II,

## Բանվորական ժամանակը։

§ 10. Բանվորական ժամանակը գիշերով կրճատվում է մեկ ժամով։ Ժամապահ (վախտենի) Բանվորի-բանվորական օրը համարվում է 8 ժամ. գիշերվա աշխատանքների ամեն մի ժամը վճարվում է վորպես 8 7 ցերեկվա աշխատանքի ժամ։

**Ծանոթ.** Գիշերվա ժամեր յեն համարվում. յեր. ժամը 10-ից մինչև առ. 6-ը։



§ 11. Բանվորները պարտավոր յեն աշխատանքների դուրս գալ որացույցային բոլոր օրերին, բացի հանգստության համար նշանակված, Աշխժողկոմի կողմից վորոշված, հեղափոխական տոներից և առանձին լրացուցիչ հանգստության օրերից։ (կրոնական տոներ)։

§ 12. Հանգստության օրերին, հեղափոխական և աշխժողկոմի կողմից հայտարարված տոներին գործի դուրս չ գալը պրոգուլ չի համարվում։

## Բաժ. III.

## Աշխատանքի ընդունելն ու արձակելը։

§ 13. Աշխ. բորսայի միջոցով, աշխատանքի ընդունելու մասին վարչությունը վոչ ուշ քան 3 օրից հայտնում է հանքկոմին։

**Ծանոթ.** Ա. Առաջին հերթին աշխատանքի պետքէ ընդունվեն անգործ միության անդամները։

բ) Յեթե աշխ. բորսան 3 օրվա ընթացքում չ բավարարի Ազնավթի պահանջը (հաշվելով պահանջը ստանալու օրից) Ապա ազնավթին անմիջական իրավունք է տրվում բանվորներ հրավիրել և նման թվով կատարված հրավերի մասին վարչությունը հայտնում է Աշխ. բորսային և միությանը հանքգործկոմի միջոցով։

գ) վարչական-տեխնիկական պաշտոնյաներ և այն բոլոր անձինք վորոնց համար անհրաժեշտ է քաղաք. ապահովություն ունենալ, կարող յեն հրավիրվել առանց աշխ. բորսայի։ Այդպիսի կարգով գործի ընդունելու դեպքում, Ազնավթը պարտավոր է հայտնել, միությանը։

§ 14. Գործի ընդունակ բանվորին, վարչությունը նշանակում է համապատասխան ու-

ճիկ, ըստ այն կարգի (ռազրյադ) վորի համար հրավիրել է։ Հաշվետետր (ռասչյոտնայա կնիժկա) կամ վերջնական ռոճիկի հաստատվում է փորձնական աշխատանքներից հետո, այն է ֆիզիքական աշխատանք ունեցող բանվորների համար վոչ ավել քան 6 օրից. 2 շաբաթ գրասենյակային ծառայողների համար և մեկ ամիս վարչական տեխնիքական ու բարձր վորակյալ գրասենյակային պաշտոնյաների համար։

§ 15. Յեթե § 14-ում հիշված փորձնական աշխատանքների ընթացքում պարզվեց բանվորի անպետքությունը, ապա նրան կարող յեն արձակել, վճարելով նրան օրավարձով, ըստ այն կարգի, վորով հրավիրված եր փորձնական աշխատանքներին

**Ծանոթ.** *Յեթե բանվորը համաձայն չե վարչության գնահատման հետ, ապա այդ հարցը լուծում է ՏԿԴԿ-ըն։*

§ 16. Վարչությունը իրավունք ունի բանվորին արձակել գործից հետեվյալ կետերի համաձայն...

ա. Բանվորի անցնական խնդրելու դեպքում, նախնական նախազգուշացումով, ֆիզիք. աշխատանքներ կրող բանվորի համար մեկ շաբաթ առաջ. գրասենյակային ծառայողների համար 2 շաբաթ առաջ ու մեկ ամիս վարչական-տեխնիքական ու բարձր վորակյալ գրասենյակային պաշտոնյաների համար.

բ) Ըստ միության առաջարկության։



գ) Հիմնարկության ամբողջական, մասնավոր, կամ նրա առանձին աշխատանքների լիկվիդացիայի դեպքում, յեթե բանվորին անհնար է տեղափոխել Ագնավթի մի ուրիշ հիմնարկություն և կամ թե բանվորը համաձայն չե այդ տեղափոխման։

դ) Գործը ավարտելու դեպքում, յեթե նրա ժամանակավոր բնույթը հայտնված եր վարձելու ժամանակ։

ե) Սույն պայմանագրի սիստեմատիք խախտման դեպքում կամ անտարբեր վերաբերմունք դեպի իր պարտականությունները։

զ) Յեթե հիվանդության պատճառով 4 ամսից ավել գործի չի դուրս գալիս։

**Ծանոթ.** *Յեթե հիվանդությունը առաջ է յեկել աշխատանքի ժամանակ, ապա նման դեպքերում թույլատրվում է արձակել միայն 6 ամսվա հիվանդությունից հետո։*

ը) Առանց հարգելի պատճառների 3 օր շարունակ գործի դուրս չգալու դեպքում կամ 6 օր զանազան ժամանակ մեկ ամսվա ընթացքում։

թ) Յեթե բանվորը գործում է քրեական հանցանք վորը անմիջական կապ ունի նրա աշխատանքի հետ և ապացուցված է ուժի մեջ մտած դատարանի վորոշմամբ. նույնպես և բանվորի ձեռբակալության դեպքում, յեթե այդ տեվում է 2 ամսից ավել։

**Ծանոթ.** *Մնացած ձերբակալությունների և հանցագործության դեպքում, յեթե միայն կապ չունի աշխատանքի հետ, այս վորոշումը չի գործադրվում և վարչությունը*

իրավունք ունի արձակել գործից բանվորին, նախ քան այդ ժամանակամիջոցի լրանալը։

թ) Յերբ պարզվում ե գործչի անպետքությունը, դեպի իրեն հանձնված գործը։

**Ծանոթ.** համաձայն բ.) ը.) թ.) ժ.) կետերի պաշտոնից արձակելը կատարվում ե ՏԿԳԿ-ի վորոշմամբ, բայց մինչև այդ վորոշումը վարչությունը իրավունք ունի դատվող բանվորին թույլ չ տալ աշխատանքների

§ 17. Համաձայն § 16 Գ.) Կ.) կետերի պաշտոնից արձակելու դեպքում բանվորը նախազգուշացվում ե 2 շաբաթ առաջ և ստանում ե հեռացման (վիխադնոյ) ոժանդակություն կես ամսվա ռոճիկի չափով։ Չնախազգուշացնելու դեպքում ոժանդակություն տրվում ե մեկ ամսվա ռոճիկի չափով.

§ 18. Համաձայն § 16 ա) բ) գ) դ) ե) զ) ը) թ) կետերի, արձակվողներին վճարվում ե միայն մինչև արձակման որը, առանց նախազգուշացման և հեռացման ոժանդակություն տալու։

§ 19. Համաձայն § գ) թ) ժ) կետերի արձակման դեպքում բացի հեռացման ոժանդակությունից վորը տրվում ե համաձայն § 17-ի, բանվորը ստանում ե նա և լրացուցիչ վարձատրություն, Ազնավթի հիմնարկություններում յերկարատև ծառայության համար։ 3 տարուց ավել ծառայողը ստանում ե իր ամսվա ռոճիկի $^1/_2$-ը իսկ 5 տարուց ավել ծառայողը 1 ամս. ռոճիկ։

**Ծանոթ.** Ծառայության ժամանակամիջոցը հաշվվում



և վերջին անգամ Ազնավթի հիմնարկությունը ծառայության մտնելու որից։ Այն բանվորների համար, վորոնք անցել յեն Ազնավթ, նախկին (այժմ ազգայնացրած) նավթարդյունաբերական հիմնարկություններից։ Ծառայության ժամանակամիջոցը հաշվվում ե այդ հիմնարկությունը ծառայության մտնելու որից։

§ 20. Արձակվող բանվորի ռոճիկը պետքե տրվի, մինչև նրա հետ փաստացի հաշիվը մաքրելու որը։ Յեթե հաշիվը մաքրված չե բանվորի պատճառով, ապա հաշվում ե գործը թողնելու որից։

§ 21. Բոլոր կետերի համաձայն գործից արձակումը կատարվում ե միաժամանակ հանքկոմին հայտնելով, բացի § 16 գ) կետի նախատեսնված դեպքից, վորով արձակելը ի կատար ե ածվում ազնավթի և միության փոխադարձ համաձայնությունից հետո։

§ 22. Աշխատանքները ժամանակավորապես դադարեցված հիմնարկությունների բանվորները և ծառայողները, ստանում յեն իրենց համապատասխան ռոճիկը ըստ տարիֆ. ցանցի, բայց յեթե գործարանը կամ հիմնարկությունը դադարեցնում ե աշխատանքը վոչ ավել քան 3 որով, բանվորներին և ծառայողներին վճարվում ե այդ որերի համար նրանց միջնին աշխատանքը։

Այդ վարձատրությունը տրվում ե միայն աշխատանքի որերի համար և վարձատրություն ստացող ծառայողները պարտավոր յեն աշխատանքի որերին ներկայանալ, վար-

չության և հանք կոմի փոխադարձ համաձայնությամբ նշանակված ժամին։

§ 23. Աշխատանքը ժամանակավորապես դադարեցված գործարանի բանվորներին ուրիշ աշխատանքների տեղափոխելու ուր չի պահանջվում վորակյալ աշխատանք-վորակյալ բանվորը կարող է տեղափոխվել, միայն իր համաձայնությամբ։

Յեթե բանվորը հրաժարվում է կատարել իրեն առաջարկած աշխատանքը, վորը տրվում է նրան վոչ համեմատ նրա մասնագիտության, այդպիսի բանվորին կարեղ յեն գործից արձակել վճարելով նրան հեռացման ոժանդակություն համաձայն §17-

§ 24. Հիմնարկության գործը դադարեցնելուց 2 շաբաթ անց, բանվորները և ծառայողները կարող յեն պահանջել վերջնական հաշիվների մաքրում, ստանալով յերկու շաբթվա ռոճիկը առաջուց, համաձայն վերջին ամսվա աշխատավարձի։

§ 25. Վարչությունը կարող է բանվորից պահանջել միայն այն աշխատանքը, վորի համար նրան հրավիրել է, բացի § 24-ում նախատեսնված դեպքերից. նա և չի կարող պահանջել վտանգավոր աշխատանքների կամ աշխատանքների որենքներին չհամապատասխանվող գործերի կատարում։



Ծանոթ. բացի դեպքերից, յերբ այդ անհրաժեշտ է պատահացող վտանգի առաջն առնելու համար, նման դեպքերում բանվորին կարելի է հանձնել այնպիսի աշխատանք վորը չի համապատասխանվում նրա վորակին։

§ 26. Յեթե գործարանում ժամանակավորապես չկա այն աշխատանքը, վորի համար հրավիրված է բանվորը, վարչությունը նրան կարող է տեղափոխել ուրիշ աշխատանքի, համաձայն նրա արհեստի. յեթե բանվորը չի համաձայնվում տեղափոխվել, վարչությունը կարող է հեռացնել նրան գործից, տալով նրան հեռացման ոժանդակություն համաձայն § 17-ի։

§ 27. Պայմանաժամի լրանալուց, սեզոնային աշխատանքների վերջացնելուց կամ առհասարակ վորոշ պայմանաժամ կնքված աշխատանքները ավարտելուց, յետո գործից արձակված բանվորը չի ստանում վոչ նախազգուշացում. և վոչ ել հեռացման ոժանդակություն։

## Բաժ. IX.

## Արձակուրդ, պաշտոն. պարտակ. ուղարկելը եւ ճանապարհածախս:

§ 28. Ազնավթը պարտավոր է բոլոր բանվորներին, տարին մեկ անգամ, յերկու շաբաթվա արձակուրդ տալ, վճարելով այդ ժամանակամիջոցին նրա հասնելիք ռոճիկը։

Ծանոթ. Նոր աշխատանքի վարձված ծառայողին տրվում է հերթական արձակուրդ $5^1/_2$ ամիս ծառայելուց յետո մնացածներին արձակուրդ է տրվում ըստ հերթի մի ամբողջ տարվա ընթացքում։

§ 29. Տարեկան ժամանակամիջոցը վորի ընթացքում, Ազնավթը պարտավոր է արձակուրդ տալ բանվորին համարվում է՝ այն անձանց համար, վորոնք ծառայության յեն մտել մինչև 1924 թ. հաշվում է՝ հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը, իսկ հունվարի մեկից հետո ծառայության մտնողների համար այն օրվանից, յերբ նրանք վարձվել յեն։

§ 30. Բանվորներին թույլ է տրվում հավաքել իրենց արձակուրդը, բայց վոչ ավել 2 տարուց։

**Ծանոթ.** Իր արձակուրդը հավաքել ցանկացող բանվորը հայտնում է այդ մասին վարչության յերբ հաստատվում է ՏԿԳԿ-ի վորոշումը, արձակուրդների հերթի մասին։

§ 31. Բանվորները, վորոնք շարունակ աշխատում է առանձնապես վնասակար պայմաններում, հերթական արձակուրդի հետ նրանց տրվում է նա և լրացուցիչ յերկու շաբաթվա արձակուրդ։ Վնասակար աշխատանքների ցուցակը կցված է սույն պայմանագրին (հավելված № 4)։

§ 32. Արձակուրդների ժամանակ, Ազնավթը վճարում է արձակուրդների սկզբին, ըստ բանվորի միջակ աշխատավարձի։



§ 33. Արձակուրդների ժամանակը, կարգը և հերթը վորոշումեն վարչությունը և հանքկումը և հաստատում է ՏԿԳԿ-ըն.

§ 34. Հիվանդության կամ սանատորիայում բժշկության դեպքում, բանվորի ստացած արձակուրդը չի մտնում նորմալ արձակուրդի հաշվին։

§ 35. Բանվորի օգտագործած արձակուրդը, վարչությունը նշանակում է հաշվետետրում։

§ 36. Այն բանվորը, վորը 1923 թ. չի ծառայել մի ամբողջ տարի և 1923 թ. չի օգտվել վոչ հերթական արձակուրդով և վոչ էլ փոխարենը դրամական վարձատրությամբ (կոմպենսացիա) դրա փոխարեն նա իրավունք ունի 1924 թ. օգտվել 4 շաբաթվա արձակորդով միայն այն դեպքում յեթե մինչև նրա փաստացի արձակուրդով օգտվելու ժամանակը նա անդադար ծառայել է 1 տարի և $5^1/_2$ ամիս։

§ 37. Բանվորներին, վորոնք թույլատրված արձակուրդներով գնում են բազվի սահմաններից դուրս, Ազնավթը պարտավոր է յերկու տարին մեկ անգամ տալ ճանապարհորդական տոմս կամ դրամ համաձայն տոմսի արժեքի. 1000 վերստ յերկաթուղով և 1500 վերս ջրային ճանապարհով խորհրդ. միության սահմաններում։

**Ծանոթ.** Ա. Այդ իրավունքով օգտվում չեն այն ծառայողները որոնք ռոճիկ են ստանում վոչ բարձր 12-րդ կարգից։

բ) Ճանապարհորդական ուժանդակություն ստացող բանվորը պարտավոր է վկայական ներկայացնել իր ճանապարհորդելու մասին, հակառակ դեպքում ճանապարհորդության համար ստացած ուժանդակությունը կպահվի աշխատավարձից։

§ 38. Յեթե բանվորը իր արձակուրդը օգտագործելու համար գնում է բազվի սահմաններից դուրս, ապա ճանապարհորդության ժամանակամիջոցը արձակուրդի հաշվի մեջ չի մտնում։ (բայց վոչ ավել 2 շաբաթից)։

**Ծանոթ.** Յերկաթուղով գնալու համար ամեն մի 400 վերստին և ջրով գնալու համար ամեն մի 200 վերստին տրվում է մի օր։

§ 39. Առձակուրդներից վերադարձողի, առանց հարգելի պատճառների յերկու շաբաթից ավել ուշանալը, նախատեսնված § 28-ում, Ագնավթին իրավունք է տալիս արձակել ուշացողին, առանց նախազգուշացման և արձակուրդային ուժանդակության։

**Ծանոթ.** Հարգելի պատճառներ յեն համարվում ուշացողների համար.

ա) Հիվանդություն, վորը վկայում է տեղական առողջբաժ. իսկ նրա բացակայության դեպքում, պետական ծառայության մեջ գտնվող բժիշկը։

բ) Գժբաղդություն, վորը բանվորին ստիպում է ուշանալ. տեղական իշխանության վկայություն։

գ) Զեռրակալում կամ դատարան կանչվելը տեղական իշխանության վկայությամբ և այլ...



ИНСТИТУТА ВОСТОКОВЕДЕНИЯ Академии Наук СССР

§ 40. Հարգելի պատճառներով ուշացողը չի զրկվում պաշտոնից, բայց ուշացած օրերի համար ռոճիկ չի ստանում։

§ 41. Այն բանվորներին, վորոնց վարչության պատճառով արձակուրդ չի տրված է յեթե բանվորը չի հայտնել իր արձակուրդի հավաքելու մասին, այդպիսիներին տրվում է դրամական (կոմպենսացիա) ուժանդակություն. այն չափով, ինչ չափով վոր բանվորը չի օգտվել առձակուրդով և տրվում է նրան միջին աշխատավարձը։

Ուժանդակություն տրվում է մինչև հունվարի 1-ը 1924 թ. ծառայության մասծներին, վոչ ուշ քան դեքտեմբերի 31-ն, իսկ միուսներին վոչ ուշ քան ծառայությունից մեկ տարի անց։

5669-66

§ 42. Բանվորին արձակելու դեպքում (ինչ պատճառով էլ վոր լինի) յեթե նա ծառայել է $5^1/_2$ ամիս, ագնավթը պարտավոր է վճարել կոմպենսացիա չօգտագործած առձակուրդի համար, յերկու շաբաթվա կամ մեկ ամսվա (ըստ բանվորի արձակուրդով օգտվելու իրավունքի) աշխատավարձ. Իսկ յեթե բանվորին արձակում են նախ քան նրա $5^1/_2$ ամիս ծառայելը, վարձատրությունը կատարվում է ըստ նրա, ծառայության ժամանակվան, այն է ամեն մի ծառայած ամսվա համար ... միջակ աշխա-

ՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ Гос. Библиотека

տավարձ, յերկու շաբթվա իրավունքով ոգտվողների համար և 7/3-րդ որվա միջակ աշխատավարձ ամեն մի ծառայած ամսվա համար 4 շաբաթվա արձակուրդով ոգտվողների համար։

§ 43. Բանվորներին, վորոնց ժամանակավորապես ուղարկում են մեկ շրջանից մյուսը համաձայն նրանց ծառայության պարտականությունների, բագվի հանք. գործար. շրջանում, ստանում, յեն բացի իրանց հասանելիք աշխատավարձից նաև որավարձ (սուտոչնի) իրենց տարիֆային ռոճիկի 1/48-րդ չափ նաև ճանապարհածախք յերկաթուղու, ելեքտրաքարշի, ավտոբուսի և ջրային ճանապարհորդության համար։

**Ծանոթ.** *Առանձին շրջաններ յեն համարվում. 1) Բիբի յեյբաթ. 2) քաղաք. շրջան 3) Սև-սպիտակ քաղաք 4) Սուրախանի 5) Բինագադի 6) Շուբանի 7) Լենինյան շրջան 8) Զիխի շրջան։*

*Որավարձ (սուտոչնի) չեն տրվում այն դեպքում, յեթե շրջանից շրջան գնալը մտնում է բանվորի պարտականությունների մեջ։*

§ 44. Հանք-գործարան շրջանից դուրս պաշտոնական պատվերներով (կոմանդիրովկա) ուղարկելուս բանվորին, բացի նորմալ վարձատրությունից տրվում է նաև լրացուցիչ.

ա) Որավարձ (սուտոչնի) 1/24-րդը իր աշխատավարձի. բայց վոչ 9-րդ կարգից ցած։

բ. Ճանապարհածախք մինչև նշանակված տեղը գնալ-գալու համար նա և մեկ փութ ապրանք (բագաժ տանելու վարձ։



գ) Կառքի փող 4 անգամ ճանապարհ գնալու համար։

դ) Յեթե պաշտոն. պարտականություններով ուղարկած վայրում ձրի բնակության տեղ չեն տալիս, որավարձը ավելանում է այնտեղ ապրելու ընթացքում 50%։

§ 45. Յեթե բանվորը բնակվում է վոչ այն շրջանում վորտեղ նա աշխատում է և այդ տարածությունը 2 վերստից ավել է, այդպիսիներին Ազնավթը պարտավոր է փոխադրության միջոցներ տալ կամ ձրի տոմս յերկաթուղու, ելեքտրաքարշի, բարկասի, ավտոբուսի և այլ, յեթե այդպիսիները շրջանում գոյություն ունեն։

## Բաժ. V,

## Աշխատավարձ.

§ 46. Բանվորների աշխատավարձ վճարելը ըստ նրանց վորակի կատարվում է ըստ 17-կարգային տարիֆային ցանցի և համեմատական չափով 1-ին կարգը 9-ին ինչպես 1-ը 3, 5-րդին և 1-ը 17-ին ինչպես 1-ը 10-ին։

§ 47. Աշխատավարձը նշանակվում է չերվոն. ռուբլիներով առաջին կարգի համար 14 ր. 50 կ. Մնացած կարգերի և նրանց միջի փայական փոխադարձ հարաբերությունը հետևյալն է։

| Կարգը | Փայական փոխադարձ հարաբերությունը | ՌՈՃԻԿԸ | |
|---|---|---|---|
| 1 | 1,— | 14 ր. 50 | |
| 2 | 1,3 | 18 ր. 85 | |
| 3 | 1,6 | 23 ր. 20 | |
| 4 | 1,8 | 26 ր. 10 | |
| 5 | 2,— | 29 ր. 00 | |
| 6 | 2,5 | 36 ր. 25 | |
| 7 | 2,8 | 40 ր. 60 | |
| 8 | 3,1 | 44 ր. 95 | |
| 9 | 3,5 | 50 ր. 75 | |
| 10 | 3,8 | 55 ր. 10 | |
| 11 | 4,2 | 60 ր. 90 | |
| 12 | 4,6 | 66 ր. 70 | |
| 13 | 5, | 72 ր. 50 | |
| 14 | 5,6 | 79 ր. 75 | |
| 15 | 7,— | 101 ր. 50 | |
| 16 | 8,5 | 123 ր. 25 | |
| 17 | 10 | 145 ր. | |

**Ծանոթ.** Շուրանու, Արտայամի կըզա և ղալայի բանվորների աշխատավարձը բարձրացված է 10%. բինադադու և խորոզանի շրջանում 5% ելեկտրատոկի բանվորների վարձատրությունը բարձրացված է 20% (հավելված № 5)։

§ 48. Որավարձը հաշվվում է ամսական տարիֆ. վճարի 1/24-րդը։

§ 49. Բանվորների աշխատավարձը հաշվվում է որավարձի հիմունքով և նրանց փաստացի գործի դուրս գալու օրերով։



§ 50. Ծառայողների աշխատավարձը հաշվվում է տարիֆային ամսավճարով, առանց հարգելի պատճառների գործի դուրս չ գալու դեպքում, պահվում է որավարձի հաշվով։

§ 51. Որավարձով աշխատող բանվորի միջակ աշխատավարձը հաշվում է՝ Ազնավթից վերջին յերկու ամսվա ընթացքում ստացված գումարից վորոշակի, (ուրոչնի) առաժամյա, հանգստի օրերի, տոնական, փուտավոյ պարգ (պրեմիալնի) և աշխատանքի մնացած տեսակները։ Այդ ստացած գումարը բաժանվում է բանվորի գործի դուրս յեկած օրերին այդ յերկու ամսվա ընթացքում, սովորական, տոնա- և հանգստի օրերին։

Ամսավճառ ստացող բանվորի միջակ որավարձը վորոշվում է, բաժանելով բանվորի վերջին յերկու ամիսների ստացվածքը, նրա փաստացի աշխատանքի դուրս յեկած օրերի վրա այդ 2 ամսվա ընթացքում

Յերկու շաբաթվա կամ մեկ ամսվա միջակ աշխատավարձը վորոշելու համար պետքե բազմապատկել միջին որավարձը 12-ով կամ 24-ով։

§ 52. Աշխատանքը հանգստի օրերին հերափոխական և ղեկրետով նշանակված տոներին ու.

նրանց նախորյակին 6 ժամից ավել վարձատրվում է կրկնակի։ Աշխատանքը հեղափոխական տոներին կրկնակի է վարձատրվում։

Առանձին հանգստի օրերին, աշխատանքի դուրս գալը (կրոնական տոներ) սեփական ցանկությամբ վարձատրվում է վորպես սովորական օր, իսկ յեթե աշխատում է վարչության պահանջով-կրկնակի։

§ 53. Արտաժամյա աշխատանքներ թույլ յեն տրվում բացառիկ դեպքերում, համաձայն աշխ. օրենքների կոդեկսի։ Նորմալ ժամերից ավել աշխատանքը, վարձատրվում է 1½ անգամ առաջին յերկու ժամերի համար և կրկնակի հետևյալ բոլոր ժամերին։

§ 54. Աշխատավարձը պետք է վճարվի 2 անգամ։

ա) վոչ ուշ քան ընթացիկ ամսի 24-ին բոլոր բանվորներին տրվում է իրենց ստանալիք ռոճիկի 60% կանխավճառ (ավանս)

բ) վոչ ուշ քան հետևյալ ամսի 10-ը վճարվում է մնացյալ գումարը։

Ծանոթ. բոլոր տեսակի վարձատրությունները պետքե վճարվեն միայն տեղակագրի (վեդոմոստի) միջոցով և թույլ չեն տրվում, վոչ մի ուրիշ ձևի վճարումներ։

§ 55. Բանվորին բարձր կարգից ցածր կարգ տեղափոխելուսնա յերկու շաբաթ դեռ ստանում է նախկին բարձր կարգի ռոճիկը։

§ 56. Տոկոսային ավելացումը այն աշխա-



տանքների համար վորոն անհնար է հաշվի առնել (կոնպեսացյա) թույլ է տրվում բացառիկ պաշտոնյաների համար, ցուցակագրված սույն պայմանագրի № 6 հավելվածում։

§ 57. Վարչական-տեխնիքական և բարձր վորակի գրասենյակային պաշտոնյաներին, թույլետրվում է վճարել բացի իրենց պաշտոնի համեմատ նշանակված ռոճիկից նա և լրացուցիչ վարձատրություն-մասնագիտական ավելացում (սպեց նադբավկա) մասնավոր պայմանագրով, բայց մյության գիտությամբ։

Մասնագիտական ավելացում ստանալու իրավունք ունեն միայն այն ծառայողները, վորոնք ստանում են 14-րդ կարգից բարձր ռոճիկ։

Ծանոթ. մասնագիտական վարձատրության ստացողները չեն կարող ստանալ վոր և է լրացուցիչ վարձատրություն. (արտաժամյա, փուտավոյ և այլ)։

## Բաժ. VI.

## Արտադրության նորման և պայմանական (սդելնայա) աշխատանքները

§ 58. Տարիֆային վարձատրություն վճարվում է անվորոշ աշխատանքներ կատարող բանվորներին, աշխատանքների բարեխիղճ և ճշգրիտ կատարման համար, իսկ վորոշակի (սդելնի) աշխատանքների կատարողներին, մինչպատերազմական միջին նորմայի արտադրության համար։

**Ծանոթ.** *արտադրության նորման իջեցնել թույլ է տրվում միայն գործիքների և մեքենաների հնության, մթերքների վատության դեպքում և այլն։*

§ 59. *Արտադրական նորման և պայմանական աշխատանքների գնահատումն վորոշում է Ագնավթը և հաստատում ՏԿԳԿ-ըն, վորց հետո հայտարարվում է ի գիտություն բոլորի։*

**Ծանոթ.** *Արտակարգ դեպքերում վարչությանը թույլ է տրվում վորոշել 3 որից ավել չ տևող պայմանական աշխատանքների գները, հետագայում ՏԿԳԿ-ի հաստատությամբ։*

§ 60. *Պայմանական աշխատանքներ թույլ յեն տրվում բոլոր դեպքերում, յերբ վարչությունը այդ անհրաժեշտ է համարում ըստ արդյունաբերության ընթացքի և պայմանական կամ հատով կատարած աշխատանքի վարձատրությունը կատարվում է բանվորի վորակի համապատասխան, նրա միջակ ռոճիկի բաժանումով արտադրության նորմայի վրա։*

§ 61. *Յեթե լիովին չի կատարված պայմանական աշխատանքը (ներգովիրաբոտկա) վոչ բանվորի պատճառով, ապա այդ դեպքում նրան պահպանվում է իր միջակ աշխատավարձը։ Իսկ յեթե աշխատանքը լիովին չի կատարված բանվորի պատճառով, ապա նա ստանում է աշխատավարձ ըստ իր կատարած աշխատանքների, բայց վոչ պակաս իր սովորական ստանալիքի 2/3 մասից։ Գործի լիովին չկատարելը բոլորովին չի վճարվում այն դեպքում, յերբ նկատվում է*



*բանվորի անտարբերությունը դեպի իր պարտականությունները։*

§ 62. *Պայմանական աշխատանքների ժամանակ անպետք (բրակ) գործը, յեթե բանվորի մեղավորությամբ չէ, գնահատվում է միջին աշխատավարձով և ժամանակավոր աշխատանքներին-տարիֆային ռոճիկով. իսկ յեթե գործի լիովին չկատարելը բանվորի պատճառով է ապա նա ստանում է ըստ իր կատարած աշխատանքների։ Բոլորովին չի վճարվում, յերբ նկատվում է բանվորի անտարբեր վերաբերմունքը դեպի իր ստանձնած պարտականությունները։*

§ 63. *§ 61 և 62 նախատեսնված վարձատրության չափը միշտ պետք է վավերացնե ՏԿԳԿ-ըն։*

## *Բաժին* VII.

## Աշխատանքի պահպանություն:

§ 64. *Նորմալ բանվորական որը, Ագնավթի այն հիմնարկություններում վորոնց աշխատանքը առանձնապես վնասակար է բանվորի համար կրճատվում է։ Այն բանվորների ցուցակը վորոնք ոգտվում են բանվորական որի կրճատումով կցված է սույն պայմանագրին (հավելված №...)։*

§ 65. *Յերեխաներ և կանայք առանձնապես վնասակար և գիշերային աշխատանքների չեն թույլատրվում։ Այդ աշխատանքների ցուցակը վորոշում է ՏԿԳԿ-ն կին բաժնի և ԿՅԵՐՄ(ԿՍՄ)*

ներկայացուցիչների հետ միասին և վավերացնում է ԿԿԴԿ-ն։

**Ծանոթ.** *Բացառիկ պայմաններում կանանց և յերեխաներին թույլ է տրվում գիշերային աշխատանքներ Աշժողկոմի առանձին վորոշմամբ։*

*§ 66. Սիստեմատիկ արտաժամյա աշխատանքներ, արգելվում է և թույլ չեն տրվում միայն բացառիկ դեպքերում, վորպես ժամանակավոր յերեվույթ Ազնավթի առաջարկմամբ, միության և Աշխժողկոմի վավերացմամբ։*

*§ 67. Առողջության վրա վատ ազդող աշխատանքներ կատարող բանվորներին, Ազնավթը պարտավոր է տալ ուժեղ սնունդ կամ սպեցիֆիկ պաշտպանողական միջոցներ։ Փոխարենը դրամական ոժանդակություն վճարելը թույլ չի տրվում։ Այդ հիմնարկությունների և բանվորների ցուցակը կցված է սույն պայմանագրին։ (Հավելված №...)։*

*§ 68. Ազնավթը պարտավոր է ապահովագրել բանվորներին համապատասխան սոցապահովագրական հիմնարկությունը և վճարել նշանակված վճարը։*

*§ 69. Բանվորի մեռնելու դեպքում նրա ընտանիքը բացի բանվորին հասանելիք ռոճիկից ստանում է Ազնավթից նա տալիս է նա և 2 ամսվա ռոճիկ, բայց վոչ պակաս 6-րդ կարգից և ծառայած տարիների ոժանդակություն համաձայն պայմանագրի § 19-ի։*



*Յեթե բանվորի մահվան պատճառը յեղել է իր պարտականությունների կատարելուց ստացված վնասվածքը, այդ դեպքում ոժանդակությունը տրվում է 4 ամսվա ռոճիկի չափով, բայց վոչ պակաս 6-րդ կարգի 4 ռոճիկից։*

**Ծանոթ.** *Վերջիշյալ ոժանդակությունը վճարվում է անկախ սոցապահովագրությունից, բացի արձակուրդային 2 շաբաթվա ռոճկից և ոժանդակությունից ծառայած տարիների համար.*

*§ 70. Այն աշխատանքները վորոնք արագ մաշում են բանվորի զգեստը և վնասակար յեն բանվորի համար, այդպիսիներին Ազնավթը տալիս է համապատասխան պիտույքներ։*

*Աշխատանքների և արհեստների ցուցակը, վորոնց տրվում է մասնագիտական զգեստ (սպեց ադյոժդա) և պահպանողական պիտույքներ ու նրանց ոգտագործելու ժամանակամիջոցը, կցված է սույն պայմանագրին (Հավելված №...)։*

**Ծանոթ.** *Մասնագիտական զգեստներ համարվում յեն հիմնարկության սեփականություն և բանվորին հանձնելու դեպքում պետք է նշանակվեն հաշվետետրի մեջ։*

*71. Հրդեհի, շատրվանի դեպքում բանվորի փչացած զգեստի, կոշիկների փոխարեն Ազնեվթը վնասված բանվորին տալիս է դրամով կամ ապրանքով իսկ փչացած զգեստը հանձնվում է հիմնարկության։ Փչացած զգեստի և դրամական հատուցման չափը վորոշում է ՏԿԳԿ-ըն։*

*§ 72. Այն բանվորներին, որոնք աշխատանքը առանձնապես կեղտոտ է, նրանց տրվում է*

սարքն։ Այդ աշխատանքների ցուցակը վորոշում է ԿԿԳԿ-ըն ըստ Աշխժողկոմի հրահանգի։

§ 73. Ագնավթի այն հիմնարկություններում, ուր այդ անհրաժեշտ է պետք է շինված լինեն լվացարաններ, ծածկված բնակարաններում։

§ 74. Ագնավթի հիմնարկություններում գոյություն ունեցող բաղանիքները ուր այդ անհրաժեշտ է պետք է վերաշինվեն սանիտար.-տեխնիքակ. պահանջների համաձայն։

§ 75. Ագնավթը պարտավոր է իր հաշվին, բացառապես բանվորների համար բժշկության սեզոնի ընթացքում պահել սանատորիա և հանգստի տներ։ Հանքային ջրերում սանատորիա 300 մահճակալներով և Ապշերոնի թերակղզում 200 մահճակալներով և Հանգստության տներ Ապշերոնի թերակղզում 300 մահճակալներով, որոնցից 90%-ը տրվում է բանվորներին և 10% ծառայողներին և վարչական-տեխնիքական պաշտոնյաներին։ Սանատորիա գնալ գալու ճանապարհածախքը վճարում է Ագնավթը։ Հանգստության տներում անցկացրած ժամանակամիջոցը մտնում է հերթական արձակուրդի հաշիվը։

Բաժ. VIII.

Բնակարաններ։

§ 76. Ագնավթը պարտավոր է բոլոր բանվորներին հատկացնել ձրի բնակարաններ իր



սեփական կամ կապալով վերցրած տներում, հնարավոր յեղած չափով այն շրջանում վորտեղ աշխատում է բանվորը Ագնավթը. պարտավորե տալ բնակարան, վառելիք, լուսավորություն ջուր։

Ա. Ագնավթը պարտավոր է ամեն մի բանվորին տալ մի ելեքտրական լամպ տարեկան, կամ նրա արժեքը 50 կ.

Բ. Բացի դրանից Ագնավթը պարտավոր է հանքագործարանային շրջաններում ապրողներին տալ 15-ական կոպեկ, ամսական 5 փ. նավթի գինը տնային պահանջների համար։

§ 77. Ագնավթի հանրակացարաններում (կազարմա) ամեն մի բանվոր պետք է ունենա առանձին մահճակալ և բնակարանը պետք է մաքուր լինի,

§ 78. Յեթե ագնավթը հնարավորություն չունենա բանվորին բնակարան հատկացնել նա դորա փոխարեն պարտավոր է տալ միայնակ բանվորին 4 ր. 35 կ. իսկ ընտանիքավորներին 8 ր. 70 կ. ամսական։

Համապատասխան կերպով վճարվում է նա և միացած բոլոր բնակարանային պահանջները։

**Ծանոթ.** § Ա. Ընտանիքավոր յեն համարվում, այն բանվորները վորոնց մոտ յեն ապրում ընտանիքի անդամները։ Յեթե մի ընտանիքից մի քանի հոգի յեն գտնվում Ագնավթի ծառայության, տպա նրանցից ամեն մեկը համարվում յեն ամենակ։

*Բ. Ընտանիքի անդամ յեն համարվում, բանվորի կինը, բանվորի ծնողները, յեթե նրանք աշխատանքի անընդունակ յեն, բանվորի յերեխաները մինչև 16 տար. յեթե նրանք ապրում են աշխատանքով։*

*Գ. Յեթե բանվորը հրաժարվում է Ազնավթի հատկացրած բնակարանից, վորը համապատասխանում է իր ընտանիքի չափին, այդ դեպքում Ազնավթը ազատում է այդպիսիներին բնակարանային վարձ վճարելու պարտականություններից։*

*§ 79. Բնակարանային վարձը պետք է վճարվի կանխավճարի հետ միասին, վոչ ուշ քան ընթացիկ ամսի 24-ին։*

## *Բաժ.* IX.

## Յերեխաներ եւ աշակերտներ։

*§ 80. Վորակյալ բանվորների պակասող թիվը լրացնելու համար, Ազնավթը պարտավոր է իր հիմնարկություններում պահել 5% աշակերտներ. այդ թվի մեջ յեն մտնում ֆաբզաւչի, տեխնիկումի դպրոցները և այլն։*

*§ 81. Յերեխաներին և անչափահասներին 5½ ամիս ծառայությունից հետո տրվում է հերթական արձակուրդ մեկ ամսով։ Արձակուրդ տալու ժամանակն է մայիս, 15-ից մինչև հոկտեմբեր 15-ը։ Արձակուրդների հավաքելը կամ փոխարենը դրամական ոժանդակություն ստանալ պատանիներին և անչափահասներին թույլ չի տրվում։*

*§ 82. Սկզբնական վարձատրություն Ազնավթի հիմնարկություններում կամ ֆաբզաւչի*



*դպրոցներում պատանիների և աշակերտների համար վորոշված է 1-ին կարգը։ Պատանիները և աշակերտները փոխադրվում յեն 2-րդ կարգը մի տարի սովորելուց և համապատասխան քննություն տալուց հետոյ։*

*Մի տարի սովորելուց հետո, ամեն մի 6 ամսից, աշակերտները քննության յեն յենթարկվում ըստ Ազնավթի և միության կուլտ-բաժնի ծրագրի և հաջող քննությունից հետո, աշակերտը տեղափոխվում է համապատասխան կարգը։ Ամենաբարձր կարգը աշակերտների համար նշանակված է 5 դը։*

**Ծանոթ.** *Բացառիկ դեպքերում քննությունը կարող է կատարվել նշանակված ժամից առաջ։*

*§ 83. Պատանիներին և աշակերտներին չըպետք է հանձնվեն այնպիսի աշխատանքներ, վորոնք կապ չունեն իրենց սովորելու հետ։*

*§ 84. Պատանիները պաշտոնական պարտականություններով չպետք է (կոմանդիրովկա) ուղարկվեն հանքա-գործարանային շրջանից դուրս։*

*§ 85. Պայմանական (սդելնի) աշխատանքներ չպետք է տրվեն աշակերտին։*

*§ 86. Պատանիներին թույլ չի տրվում արտաժամյա աշխատանքներ կատարել։*

*§ 87. Աշակերտների կրճատված բանվորական օրվա վարձատրությունը կատարվում է*

վորպես ամբողջ բանվորական որվա համաձայն իր կարգի։

§ 88. Չսովորող պատանիները կարող յեն թույլատրվել աշխատանքի, յեթե նրանց վորակը պոդրուչնույ ցած չե և այդ դեպքում վարձատրվում ե՝

Ա. Ինդիվիդուալ աշխատանքների դեպքում ըստ պայմանական գնահատման բանվորների համար և կոմպենսացիայով կրճատված բանվորական որվա համար ըստ նրանց տարիֆային ռոճկի։

Բ. Բրիգադային կամ բանվորների հետ ակորդային աշխատանքների, իր համապատասխան կարգի ռոճկի % ավելացումով, համաձայն բրիգադայի կամ վարպետի աշխատանքի։

§ 89. Սովորական արտադրական նորման պատանիների համար համեմատած բանվորի նորմայի իջեցնում ե համաձայն բանվորական որի կրճատման։

§ 90. Չի թույլատրվում, պատանեկական տարիքն անց (18 տ.) աշակերտին արձակել, յեթե միայն նա ծրագրի 2/3-րդ մասը անցել ե հաջող։

Բաժ. X.

Բանվորի կուլտ-կրթական պահանջները։

§ 91. Ազնավթը ընդհանուր աշխատավարձի



$1^{1}/_{2}$% ե մտցնում ֆաբզավուչի դպրոցների բոլոր ծախքերի հոգալու Բալախանու տեխնիկումի և պրոֆտեխնիքական դասընթացներ վորակյալ բանվորներ պատրաստելու համար։

Ֆաբզաուչի դպրոցները, Բալախանու տեխնիկումը և պրոֆտեխնիքական դասընթացքները կցվում են համապատասխան տնտեսբաժիններին, վորոնք մտցնում յեն իրենց նախահաշվի մեջ այն բոլոր ծախքերը, վորոնք պահանջվում են նրանց կազմակերպման համար։

§ 92. Ազնավթը պարտավոր ե բացել ֆաբզաուչի դպրոցներ վոչ պակաս քան 1000 մարդու համար, պրոֆտեխնիքական դասընթացքներ և Բալախանու Տեխնիկում վոչ պակաս քան 400 մարդու։

Ազնավթը պարտավոր ե տալ 6 ամսվա ընթացքում, հիսուն հազար ռուբլի ֆաբզաուչի դըպրոցների համար, մեքենաներ և գործիքներ ձեռք բերելու համար։

§ 93. Բալախանու տեխնիկումի և պրոֆտեխնիքական դպրոցների աշակերտների բանվորական որը կրճատվում ե մեկ ժամով և վճարվում ե Ազնավթի կողմից միջակ վարձատրությամբ համեմատ նրանց աշխատած միջակ ժամերին։ Յեթե անհնար ե ազատել, ապա դասըն-

թաղքներում մի ժամ սովորելը վճարում է Ագնավթը մեկ (ոդինարնի) չափով։

§ 94. Կուլտ-կրթական աշխատանքների համար (անգրագիտության լիկվիդացիա, բանակումբներ և այլ,)։ Ագնավթը պարտավոր է տալ միությանը $1^{1}/_{2}\,{}^{0}/_{0}$ աշխատավարձի ընդհանուր գումարից։ Վերոհիշյալ տոկոսները վճարվում է այն ժամանակ, երբ և աշխատավարձը։ I և II աստիճանի դպրոցներ պահելու համար հանք-գործ. շրջանում Ագնավթը բանխորհրդի ՈՆՈ-ին վճարում է $1^{1}/_{2}$ տոկոս ընդհանուր աշխատանքից։

§ 95. Ագնավթը պարտավորվում է վերաշինել բոլոր միության (ամառային և ձմեռային ակումբները) տալ լուսավորություն, վառելիք, ջուր և հեռախոս։ Ագնավթը պարտավոր է կարճ ժամանակամիջոցում շինել Բալախանու բանվորական թատրոն «Ռեկորդը» և Բինագադու և Սպիտակ քաղաքի ակումբները։

Ծանոթ. Բոլոր միության ակումբները կցվում են Ագնավթի Տնտեսբաժիններին, և ծախսը մտցվում է նրանց նախահաշվի մեջ։

§ 96. Ագնավթը պարտավոր է պահել Խորհրդ. միության ՎՈՒԶ-ում 230 ուսանող, տալով նրանց թոշակ. Թոշակ ստացողների ընտրությունը կատարում է միությունը։ Թոշակի չափը նշանակվում է 50 չերվոն ռուբլի ամսա-



կան և պետք է վճարվի ամիսը մեկ անգամ, ոչ ուշ քան հետևյալ ամսի 1-ից։ Բացի թոշակից Ագնավթը պարտավոր է ամեն մի թոշակ ստացող ուսանողին տալ միաժամանակ ուսումնական տարվա սկզբին, բայց ոչ ուշ հունվար մեկից, օժանդակություն մի ամսվա թոշակի չափով, գրքեր ձեռք բերելու համար։

§ 97. Ադրբեջանի Պոլիտեխն. Ինստիտուտին և շրջանային բանֆակներին օգնության նպատակով, Ագնավթը միության դրամարկղն է մտցնում ${}^{1}/_{2}\,{}^{0}/_{0}$ ընդ. աշխատանքից։

## Բաժ. XI.

## Միության կազմակերպությունները։

98. Հանքկոմի աշխատանքների համար, համաձայն միության պահանջի, Ագնավթը պարտավոր է ազատել ընտրված ընկերներին, չնայած նրանց պաշտոնին և պահել նրանց ${}^{0}/_{0}$ գեղ. ջումներով (ռաշխոդնիկե)։

Ծանոթ. Ա. Գործից չազատված հանքկոմի անդամներին և կոմիսիայի նախագահները անհրաժեշտ դեպքում կարող են ազատվել իրենց պարտականություններից, ամեն մի առանձին դեպքում դրա մասին հայտնելով վարչությանը։

Բ. Հանքկոմի անդամին գործից արձակել կարելի է միայն միաց. Հանքկոմների կամ միության կենտր. վարչության համաձայնությամբ։

Գ. Պարտականություններից ազատված հանքկոմի անդամներին Ագնավթը պարտավոր է տալ նույն պաշտոնը որից նա հանված էր։

§ *99.* Ազնավթը պարտավոր է հանքկոմին, միացյալ հանքկոմներին և միութ. կենտր. վարչ. հատկացնել բնակարան, վառելիք, լուսավորություն և հեռախոս։

